2026 թվականի
հունվարի «23»-ին կնքված
N «1032-11002/2026-ՀՏԵՏ5» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | 1032-11002/2026-ՀՏԵՏ5 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հույս տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամ |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 05.01.2026-31.12.2026 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2026-30.06.2026 |
| Ներկայացման օր | 28.07.2026թ. |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Արտակ Վերդյան<br>Ծրագրի համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

***Գործողություն 1***

Կկատարվի ՄՍԾ տարածքային կենտրոնների կողմից ուղեգրված շահառուների անհատական կարիքների գնահատում:

***Գործողություն 2***

Յուրաքանչյուր շահառուի համար կկազմվի անհատական սոցիալական ծրագիր և այցելությունների գրաֆիկ:

***Գործողություն 3***

Կկազմակերպվի խնամքի ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան, մասնավորապես՝

- ✓ **կենցաղային սպասարկում**
- ✓ **բժշկական օգնություն և սպասարկում**
- ✓ **սոցիալ-հոգեբանական օգնություն**
- ✓ **խորհրդատվական աջակցություն**

***Գործողություն 4***

Ըստ շահառուների նախասիրությունների, կկազմակերպվեն տարաբնույթ մշակութային միջոցառումներ, այդ թվում՝ էքսկուրսիաներ՝ ապահովելով շահառուների առնվազն 80 տոկոսի մասնակցությունը:

***Գործողություն 5***

Ժամանակին և պատշաճ որակով Նախարարությանը կներկայացվեն ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակում նախատեսված գործողություններից իրականացվել են հետևյալները.

***<u>Գործողություն 1</u>***

Ծրագրի սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է 22 շահառուների անհատական կարիքների վերագնահատում*:*

***<u>Գործողություն 2</u>***

Յուրաքանչյուր շահառուի համար կազմվել է այցելությունների գրաֆիկ, որը սահմանում է ծրագրի սոցիալական աշխատողի, սոցիալական սպասարկողների և բուժքրոջ կողմից կատարվելիք պարբերական այցելությունների ժամանակացույցը*:*

***<u>Գործողություն 3</u>***

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է խնամքի ծառայությունների տրամադրում՝ ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան, մասնավորապես՝

- ✓ **կենցաղային սպասարկում**

  Ծրագրի սոցիալական սպասարկողները ապահովել են շահառուի անձնական հիգիենան, բնակարանի մաքրությունը, անհրաժեշտության դեպքում կազմակերպել լոգանքը, իրականացրել գնումներ, կոմունալ վճարների մուծումներ, սննդի պատրաստում, անհրաժեշտության դեպքում՝ կերակրումը: Բացի այդ, սոցիալական սպասարկողները կատարել են համապատասխան գրառումներ շահառուների տանը գտնվող 1 ամսյա հաշվետվության թերթիկներում և մատյաններում՝ արձանագրելով նրանց վիճակի փոփոխությունները և մատուցված ծառայությունները*:*

- ✓ **բժշկական օգնություն և սպասարկում**

  Բուժքույրն ապահովել է բժշկի նշանակումների կատարումը՝ կազմակերպելով դեղերի տրամադրումն ու նշանակված ներարկումների իրականացումը:

  Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի բուժքրոջ կողմից ծրագրի 8 շահառուներին (Սվետլանա Շատալյուկ, Մարի Գազազյան, Հեղուշ Հարությունյան, Էդգար Հայրապետյան, Ջուլետտա Մնացականյան, Վարիյա Ավանեսյան, Սամվել Կոստանդյան, Գոհար Խոյեցյան) տրամադրվել է բժշկի կողմից նշանակված դեղերը, 1 շահառուի (Ջուլետտա Մնացականյան) համար կատարվել է համապատասխան ներարկում, շահառու Մարգարիտ Պողոսյանի համար գրանցվել է բժշկի կանչ:

  Ծրագրի բուժքույրը կազմակերպել է այցելություն պոլիկլինիկա, ուղղորդել և ուղեկցել նրանց այլ բժշկական հաստատություններ:

✓ **սոցիալ-հոգեբանական աջակցություն**

Սոցիալական աշխատողը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է շահառուի անհատական սոցիալական կարիքի գնահատում և վերագնահատում, ուղղորդում, ուղեկցում և համապատասխան աջակցության ցուցաբերում:

Ծրագրի սոցիալական աշխատողը շահառու Մարգարիտ Պողոսյանին ցուցաբերել է աջակցություն հիվանդանոցում բուժում ստանալու ժամանակ, շահառու Ջուլետտա Մնացականյանին ուղեկցել է ՄՍԾ տարածքային կենտրոն, Մարի Գազազյանի համար կատարել է այց ՄՍԾ տարածքային կենտրոն՝ հրատապ աջակցության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր ձեռք բերելու նպատակով:

***<u>Գործողություն 4</u>***

Հունիսի 24-ին նախատեսված էր շահառուների այց թատրոն՝ նրանց մշակութային ժամանցի կազմակերպման նպատակով: Սակայն շահառուներից մի քանիսի առողջական վիճակի վատթարացման, ինչպես նաև այն հանգամանքի պատճառով, որ շահառուների շուրջ 80%-ը չէր կարող մասնակցել միջոցառմանը, այցը հետաձգվեց:

***<u>Գործողություն 5</u>***

Ժամանակին և պատշաճ որակով Նախարարությանը ներկայացվել են ամսական ֆինանսական հաշվետվությունները:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն):

1. https://www.houseofhope.am/am/news/6a0d5791f6a98053321d1a4a
2. https://www.houseofhope.am/am/news/6a200fb12ff8a22287090322
3. https://www.facebook.com/photo?fbid=1023179450381362&set=pcb.1023179683714672
4. https://www.facebook.com/photo/?fbid=1025125530186754&set=pcb.1025124623520178

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

Ծրագրով նախատեսված էր կազմակերպել միջոցառում՝ ապահովելով շահառուների առնվազն 80 տոկոսի ներգրավվածությունը: Հիմնվելով նախկինում արված հարցումներն և շահառուների տոկոսին՝ ովքեր ցանկություն էին հայտնել մասնակցել միջոցառումներին, սոցիալական աշխատողի կողմից արվել է հեռախոսազանգեր, ինչի արդյունքում պարզ է դարձել, որ շահառուների զգալի մասը իրենց առողջական վիճակով և տեղաշարժման սահմանափակումներով պայմանավորված չեն կարող մասնակցել:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

***Գործողություն 1***

Անհրաժեշտության դեպքում կկատարվի ՄՍԾ տարածքային կենտրոնների կողմից ուղեգրված շահառուների անհատական կարիքների գնահատում: Յուրաքանչյուր շահառուի համար կկազմվի անհատական սոցիալական ծրագիր և այցելությունների գրաֆիկ:

***Գործողություն 2***

Կկազմակերպվի խնամքի ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան, մասնավորապես՝

- ✓ **կենցաղային սպասարկում**
- ✓ **բժշկական օգնություն և սպասարկում**
- ✓ **սոցիալ-հոգեբանական օգնություն**
- ✓ **խորհրդատվական աջակցություն**

***Գործողություն 3***

Ըստ շահառուների նախասիրությունների, կկազմակերպվեն տարաբնույթ մշակութային միջոցառումներ, այդ թվում՝ էքսկուրսիաներ՝ ապահովելով շահառուների առնվազն 80 տոկոսի մասնակցությունը:

***Գործողություն 4***

Ժամանակին և պատշաճ որակով Նախարարությանը կներկայացվեն ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար

Հաշվետու ժամանակահատվածում, կարիքի վերագնահատման արդյունքում Ծրագրում ներառված շահառուներին տրամադրվել է լրացուցիչ աջակցություն «Հույս տուն» բարեգործական կենտրոն հիմնադրամի կողմից:

- Վարիյա Ավանեսյանին տրամադրվել է 1 տուփ տակդիր՝ 2 անգամ,
- Ժաննա Օգանովային տրամադրվել է քայլակ,
- Էդգար Հայրապետյանին տրամադրվել է «OLYMP» վերնաշապիկ,
- Ջուլետտա Մնացականյանին տրամադրվել է 1 տուփ տակդիր,
- Անահիտ Սիրեկանյանին տրամադրվել է 1 տուփ տակդիր:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամ տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 25/25 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 18 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 2 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 0 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 2 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 11 |
| 1.4 | այդ թվում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված | 3 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա – 2<br>Բ - 23 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 25 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 25 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 25 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 0 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 25 |
| 7. | այլ ծառայություններ (*նշել*) | 0 |

Հիմնադրամի տնօրեն՝ «28».07.2026թ.